

**ՀՈԼԱՆՊԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 89-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ  
ՇԱՐԱԹՆ ԱՎԱՐՏԵՑ ԱՍՍԵՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՄԲ**

ԱՍՍԵՆ, 26 ԱՊՐԻԼԻ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ապրիլի 24-ին հոլանդական Ասսեն քաղաքի դե Բոսքամփ գերեզմանատան հուշահամալիրում հարյուրավոր մարդիկ են մասնակցել Հայոց ցեղասպանության զոհերի ոգեկոչման արարողությանը: Ինչպես հաղորդում է Հոլանդական լրատվական գործակալությունը, մի շարք բանախոսներ կոչ են արել Հոլանդիայի եւ Թուրքիայի կառավարություններին ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Հոլանդիայի Հայկական կազմակերպությունների դաշնության ներկայացուցիչ Ս. Հախվերդյանը Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը համարել է «Եվրամիությանը նրա անդամակցության հիմնական պայմանը»: Մեկ այլ բանախոս՝ նշանավոր երգիծաբան Ֆրեեկ դե Յոնգեն նշել է, որ ամաչում է Հայոց ցեղասպանության նկատմամբ հոլանդական կառավարության դիրքորոշումից, որը մինչ օրս չի ճանաչել Հայոց եղեռնը՝ ի տարբերություն Ֆրանսիայի, Շվեդիայի, Շվեյցարիայի, Բելգիայի եւ Կանադայի: Դե Յոնգեի խոսքերով, շատերն արդեն մոռացել են Հայոց ցեղասպանության մասին. «Ցեղասպանություն բառն այնքան ծանոթ չի հնչում, որքան Հոլոքոսթը: Դեռեւս ցեղասպանությանը նվիրված թանգարան չկա»: Այդ իսկ պատճառով, նա կոչ է արել Նիդեռլանդներին աշխատել Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ: «Ո՞ր է մնում այն առաջատար պետությունը. թվում է՝ նա ինքը կորցրել է իր ճանապարհը», - ընդգծել է Յոնգեն: Ասսենում տեղի ունեցած միջոցառմամբ ավարտվել է Հայոց ցեղասպանության 89-րդ տարելիցին նվիրված շաբաթը, որ նախաձեռնել էր Նիդեռլանդների հայ համայնքը: Ապրիլի 21-ին Հոլանդիայի Հայկական կազմակերպությունների դաշնությունը խնդրագիր է ներկայացրել երկրի կառավարությանը, որում կրկին կոչ է արվում Նիդեռլանդներին ճանաչել Հայոց ցեղասպանությունը: